

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

-----ի 2017 թվականի N -----Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ  
ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N 1039-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի ««ՀՀ Կոտայքի մարզի Փյունիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու և գույք հետ վերցնելու մասին» N 1039-Ա որոշման մեջ՝ լրացնել նոր՝ 6-րդ կետ.

«6. Սույն որոշման 2-րդ կետով սահմանված վերակազմակերպման գործընթացն սկսել 2018 թվականի հունիսի 1-ից:»:

## Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

### **«ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի N 1039-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման**

#### **Անհրաժեշտությունը**

«ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի N 1039-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Փյունիկի համայնքի դպրոցական տարիքի երեխանների ուսուցումը բնականոն կազմակերպելու պահանջից:

#### **Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**

ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի N 1039-Ա որոշմամբ «ՀՀ Կոտայքի մարզի Փյունիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը միացման ձևով վերակազմակերպել է միացվելով «ՀՀ Կոտայքի մարզի Արտավազի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը: Որոշմամբ նախատեսվում է երկամսյա ժամկետում ապահովել գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը, հանձնման-ընդունման ակտերի կնքումը, ինչպես նաև նշված գույքի կազմի միացման պայմանագրի և փոխանցման ակտի հաստատումը:

Որոշման ընդունումը նպատակաուղղված էր սովորողներին տրամադրվող կրթության որակի բարձրացմանը ինչը մեծապես պայմանավորված է նաև կրթության կազմակերպման միջավայրով:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ՀՀ Կոտայքի մարզի Արտավազի միջնակարգ դպրոցի շենքային պայմանները ոչ բարվոք են, ընթանում են վերանորոգման աշխատանքներ:

Փյունիկի միջնակարգ դպրոցն ունի 44 աշակերտ և գտնվում է շուրջ 1820 մ բարձր լեռնային գոտում: Արտավազի միջնակարգ դպրոց հասնելու համար երեխաները պետք է մոտ 2-3 կմ ճանապարհ անցնեն՝ հաղթահարելով խոչընդոտներ, հատկապես 5-6 ամիս տևող խիստ ծմեռվա եղանակային պայմաններում:

ՀՀ Կոտայքի մարզի Փյունիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «ՀՀ Կոտայքի մարզի Արտավազի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ միացման / վերակազմակերպման/ աշխատանքներն արդյունավետ իրականացնելու, սովորողների՝ տրանսպորտային միջոցներով տեղափոխումը կազմակերպելու համար նպատակահարմար է փոփոխություն կատարել

որոշման մեջ՝ ուժի մեջ մտնելու ժամկետները երկարացնելով մինչև 2018 թվականի հունիսի 1-ը:

### **Ակնկալվող արդյունքը**

ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի N 1039-Ա որոշման մեջ համապատասխան լրացումներ կատարելով, որոշման ուժի մեջ մտնելու ժամկետները երկարաձգելով, հնարավորություն կընձեռնվի 2018-2019 ուսումնական տարվա սկզբին բնականոն կազմակերպելու ՀՀ Կոտայքի մարզի Փյունիկի միջնակարգ դպրոցի սովորողների ուսումնառությունը՝ ապահովելով կրթական բարենպաստ միջավայր:

### **Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

«ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի N 1039-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտությունը բացակայում է:

### **Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

«ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի N 1039-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

## ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**«ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի N 1039-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գերատեսչությունների դիտողությունների և առաջարկությունների մասին**

N/N	Գերատեսչությունների անվանումը	դիտողություններ և առաջարկություններ	Նշումներ կատարման վերաբերյալ
1.	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	Առաջարկում է՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի N 1039-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետի «2018 թվականի մայիսի» բառակապակցությունը փոխարինել «2018 թվականի հունիսի» բառակապակցությամբ:	Կատարված է
2.	ՀՀ ֆինանսների նախարարություն	Առաջարկում է՝ նախագծի 1-ին կետը համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջին՝ համաձայն որի իրավական այլ ակտի լրիվ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են իրավական ակտն ընդունող մարմնի անվանումը, իրավական ակտի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, ակտի վերնագիրը, ակտի հերթական համարը և տեսակը:	Կատարված է

3.	ՀՀ արդարադատության նախարարություն	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի N 1039-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ախազիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին:	
----	---	--	--